



## ■ Զօրակցութիւն՝ աճող սերունդին

Ընդ սրաշտպանութեան բանակի հրամանատար Սամուէլ Բարայեանը 1500 տղար փոխանցած է՝ պատերազմի ընթացքին իրենց երեխաները կորսնցուցած ծնողներու օգնութեան հիմնադրամին: Գումարը ստացուած է Աւստրալիոյ Սիտնի քաղաքի բնակիչներ Քաթրին և Սուլթան Կորէյեաններէն, որոնք որոշած էին իրենց խնայողութիւններու մէկ մասը ուղարկել անձամբ հրամանատարին՝ ի նշան երախտագիտութեան: Ծնորհակալութիւն յայտնելով, Սամուէլ Բարայեանը Կորէյեան քոյրերուն յայտնած է, որ չի կրնար նուէրը ընդունիլ, քանի որ նման աջակցութեան կարիք ունի ամէնէն առաջ Արցախի աճող սերունդը:

«Ձեր ազնիւ արարքը ես կ'ընկալեմ իբրեւ ապացոյց այն բանին, որ Սփիւռքի մեր հայրենակիցներու օգնութիւնը ու բարոյական աջակցութիւնը անզնախառնելի ներդրում կը կազմեն ազատութեան եւ անկախութեան համար մարտնչող Ղարաբաղի ժողովուրդի պայքարին, որու յաղթանակին մենք կը հաւատանք»:

\*\*\*

## ■ Գործազուրկներու թիւը կը կրճատուի

Ստեփանակերտի բնակչութեան զբաղուածութեան կեդրոնի տնօրէն Ալեքսանդր Ամիրխանեանի տուեալներուն համաձայն՝ յուլիսի համեմատութեամբ օգոստոսին զբանցուած գործազուրկներու թիւը կրճատուած է 36ով: Այսպէս, Էթէ յուլիսին զբանցուած էր 186 մարդ, ապա օգոստոսին՝ 150: Ինչ կը վերաբերի բնակչութեան զբաղուածութեան մասին, ապա յուլիսին աշխատանք ստացած է 36, օգոստոսին՝ 32 գործազուրկ: Ա. Ամիրխանեանի խօսքերով՝ 1993 թուի ապրիլ 1էն մինչեւ այժմ 1279ի անձերու վճարուած է 7.122.092 ուրլի նպաստ:

\*\*\*

## ■ Հիւանդանոցներ կը գործեն

Ընդ առողջապահութեան կեդրոնէն յայտնուած է, որ մայրաքաղաքի մէջ գոյութիւն ունին 7 հիւանդանոցներ և 4 փոլիքլինիք: Այժմ կը գործեն 5 հիւանդանոցներ և 4 փոլիքլինիք: Մնացեալ 2 հիւանդանոցները աւերուած են:

\*\*\*

## ■ Ստեփանակերտի մէջ սկսած է ուսումնական տարին

Ստեփանակերտի «Գրիբոյէտովի» անուան թիւ 3 դպրոցի տնօրէն Կարէն Անդրեանը յայտնած է, որ առաջին դասարանի 1993 – 1994 ուսումնական տարուայ ընդունելութիւնը դեռ եւս կը շարունակուի: Ինչպէս նշած է ան, նախորդ տարուայ համեմատութեամբ աշակերտներու թիւը 850էն աւելցած է 1100ի: Անդրեանի խօսքերով՝ յառաջիկայ ձմրան դպրոցը վառելիքաւայտով տաքցնելու հարցը լուծուած է, շնորհիւ տարուած աշխատանքներուն:

\*\*\*

## ■ «Կիթովէ Նովինի»-ն ԸՂԿ իրադարձութիւններու մասին

Չեխովալաքիոյ «Կիթովէ Նովինի» թերթը ԸՂԿ վերջին իրադարձութիւններու վերաբերեալ եւ Յ. Պետրանէկի ստորագրութեամբ հրատարակած է մեկնարանական յօդուած մը: Յօդուածին մէջ կարելի է կարդալ հետեւեալը.—

«Կ'երեւի քէ Ալլաիը իր երեխաներուն երես դարձուցած է ոչ միայն Մերձաւոր Արեւելքի եւ Պալեստինայի մէջ, այլեւս հայերու եւ ատրպէյնացիներու միջեւ մարտադաշտերուն վրայ: Լեռնային Ղարաբաղի հարաւային շրջաններուն տեղի ունեցած մարտերուն հետեւանալով Իրանի հետ սահմանին վրայ կուտակուած 150 – 200.000 փախստականներով: